***ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ***

***ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ***

Պատվիրատուն՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, որը գտնվում է ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է ԴԴ-ՇՀԾՁԲ-15/1-04 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2017թ-ի հունվարի 12-ին կնքված ԴԴ-ՇՀԾՁԲ-15/1-04-9 ծածկագրով պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2017թ-ի հունվարի 23-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

**Փոփոխության պատճառ :** Պայմանագիրը կնքվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա: Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցման համար նախատեսվել են համապատասխան ֆինանսական միջոցներ:

**Փոփոխության նկարագրություն:** վճարման ժամանակացույցի հաստատում:

**Փոփոխության հիմնավորում:** Պայմանագրի 7.1 և 7.3 կետեր

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի գնումների համակարգող Մ.Հայրապետյանին:

Հեռախոս՝ 511 787:

Էլ. փոստ՝ ddgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
12.01.2017թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N <<ԴԴ-ԾՀԾՁԲ-15/1-04-9>> ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան «23» հունվարի 2017թ.

<<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ն՝ ի դեմս ղեկավար Կարեն Փոլադյանի, որը գործում է <<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ԱրմենՏել>> ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության լիազորված անձ Գառնիկ Տիտանյանի, որը գործում է Ընկերության գլխավոր տնօրենի կողմից 16.11.2016թ. տրված N 00238/16 լիազորագրի հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 12.01.2017թ. կնքված N ԴԴ-ԾՀԾՁԲ-15/1-04-9 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.1 և 7.3 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաստատել Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված N1-ի:

1.2 Ծառայության մատուցման ժամկետ սահմանել մինչև 30.12.2017թ. ներառյալ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ***«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ*** | ***«ԱրմենՏել» ՓԲԸ*** |
| Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 | Հասցե՝ ք. Երևան, Ահարոնյան 2 |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՎՀՀ՝ 02500052 |
| Հ/Հ՝ 900011192151 | Հ/Հ՝ 163004038879 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ |
| Ղեկավար՝ Կ. Փոլադյան | Լիազորված անձ՝ Գ. Տիտանյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | |

Հավելված N 1
12.01.2017թ. կնքված N ԴԴ-ԾՀԾՁԲ-15/1-04-9 պայմանագրի
23.01.2017թ. կնքված N 1 համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Չ/Հ | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2017 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը՝ Տարի |
| 2 | Ինտերնետային կապի տրամադրման ծառայություն (ծառայության մատուցումը «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի ՀՀ մարզերում գտնվող առանձնացված ստորաբաժանումներին) | 970000 | 1940000 | 2910000 | 3880000 | 4850000 | 5820000 | 6790000 | 7760000 | 8730000 | 9700000 | 10670000 | 11640000 | **11 640 000** |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

***«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

***«ԱրմենՏել» ՓԲԸ***
Հասցե՝ ք. Երևան, Աճառյան 2
ՀՎՀՀ՝ 02500052
Հ/Հ՝ 163004038879
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ

Լիազորված անձ՝ Գ.Տիտանյան

(ստորագրություն)